

ԿՐԸԿԻ ՊԸՉՏԸՄ ՈՒՆՔ

Արակապաշտութեան մնացորդներից նշանաւոր Ին Հետեւեալները.

- 1) Արակով երգւում են:
- 2) Արակը թէ՛ վառելիս և թէ՛ հանգցնելիս «Յիսուս Քրիստոս» են ասում:
- 3) Արակի վրայ ջուր չեն ածում և եթէ ստիպուած են ածելու՝ ասում են. «Յիսուս Քրիստոս, ես մեղայ Լստծու»:
- 4) Արակին չեն խփում, վերան չեն թքում, վերայից չեն անցնում:
- 5) Գիշերները կրակ դուրս չեն տալիս, վնասաբեր համարելով այդ:
- 6) Գիշերները լողանալիս մի կրակ են ձգում ջրի մէջ, որպէսզի չարը խափանի»:
- 7) Միւսնոյն սենեակում երեք ճրագ չեն վառում, մեղք համարելով այդ:
- 8) Փայտը վառուելիս եթէ ձայն է հանում, ասում են, թէ իրենց բամբասում են. և որպէսզի դուշակեն, թէ ով է բամբասողը՝ սկսում են անուններ տալ և ում անուան վերայ որ դադարի ձայնը՝ նա կը լինի բամբասողը:
- 9) «Մոմը վառւած միջոցին ծայրին գոյացած ձւերից դուշակութիւններ են անում. այսպէս օրինակ, երբ չորս բարակ շլւղեր են մնում, ասում են ձիաւոր հիւր պիտի դալ, երբ խաչ է գոյանում, ասում են իրենցից մինը պիտի մեռնի և այլն:

Արակի պաշտաման հետ կապուած է և օջախի պաշտամունքը. Ընդհանրապէս բոլոր օջախները առանձնապէս յարգւում են, ոչ ոք չի թքում նրանց վրայ, կամ անարդանքով վերաբերւում. աւելացած մեռնաջուրը օջախն են ածում, ամենամաքուր տեղ համարելով այդ: Բացի դրանից օջախով երգւում են, օջախով օրհնում և անիծում: Հարսանիքի ժամանակ հարսը երկրպագում է հայրենական օջախին, և նրանից միքիչ մոխիր վերցնում իւր հետ տանելու սկսւրանց տունը: Տղաբերքի ժամանակ ծննդկանը օջախի առաջն է ծնում և կամ օջախի

մոխրից իւր մօտ դնում: Ննջեցեալ եղած միջոցին միքանի օր օջախի առաջ կանթեղ են վառում: Գիւղատիրոջ կամ երկար ժամանակ տանուտիրութիւն անողների օջախները յարգւում են ամբողջ գիւղից, այդտեղ ուխտ են գալիս, մոմեր վառում, հարս ու փեսան իախ քան թաղուորի տուն գնալը՝ գալիս համբուրում են այդ օջախից: Միքանի օջախներ էլ իբր մի որոշ հիւանդութեան բուժիչ են պաշտւում. այսպէս՝ օրինակ, Փիփ գիւղում Նահատակենց օջախը, որ մի կիսաւեր տան սովորական օջախ է, համարւում է որպէս մկնատամի բուժիչ. գալիս են մոմ վառում, հողից տանում ջրով շաղախում և քսում մկնատամի վրայ, որ լաւանայ:

Ծ Ա Ռ Ե Ր Ի Պ Ա Ջ Տ Ա Մ Ո Ւ Ն Ք.

Ինչպէս Վարանդայում, այնպէս և Գանձակի գաւառում դեռ մնում է ծառապաշտութիւնը: Ո՛չ միայն շատ գիւղերում, այլ և նոյն իսկ քաղաքում կան նուիրական, սուրբ համարուած ծառեր: Սրանց առաջ չոքում աղօթում են, աքաղաղ, ոչխար, եզ մատղում և առաջնի կատարը, ու վերջիններիս եղջիւրները քաշ անում ծառից. հիւանդները իրենց հանդերձներից կտորներ պատառում և կապում են ծառի ճիւղերից, որպէսզի իրենց հիւանդութիւններն էլ այդ շորերի հետ այդտեղ մնան. ուրիշներ հիւանդանալիս աղօթող կանանց աղօթել տալուց յետոյ՝ այն ասեղը, որով աղօթում են, բերում շուլուլում են այդ ծառի տերեւների վրայ կամ խրում. նրա կեղեւի մէջ, որպէսզի հիւանդութիւնը, որ ասեղին է անցած լինում, այդտեղ մեխուած մնայ և չկարողանայ վերադառնալ: Ամուլ կանայք էլ գալիս են այդ սուրբ համարուած երկճիւղ ծառերի միջով երեք անգամ անցնում, որ որդի ունենան:

Այո ծառերով երդւում են, նրանց վկայ բռնում, երբ մարդկանցից ծածուկ դրամ են պարտք վերցնում և կամ մի աւանդ պահ տալիս:

Ո՛չ մի հաւատացող չի համարձակւում վնասել այդպիսի ծառերին. նրանցից մի ճիւղ, մի տերեւ անգամ կտրելը մեծ մեղք է համարւում և մեղանջողները, ինչպէս պատմում են,